

ՀՏԴ 336.07

Վ. Հարությունյան, Կ. Սարգսյան

**ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍՇ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՍԿԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Բանալի բառեր`** պետություն, ֆիսկալ քաղաքականություն, ֆինանսատնտեսական ճգնաժամ, խթանող, զսպող, գործիքներ, տնտեսական աճ, հարկեր, պետական ծախսեր:

**Ключевые слова:** государство, фискальная политика, финансово-экономический кризис, стимулирующий, ограничивающий, инструменты, экономический рост, налоги, государственные расходы.

**Keywords:** state, fiscal policy, financial-economic crisis, stimulating, restraining, tools, economic growth, taxes, state expenses.

Հոդվածում բավական մանրամասնորեն դիտարկված են պետության կողմից վարվող ֆիսկալ քաղաքականության հիմնական ձևերը, դրանց բնորոշ գործիքները և կիրառման առանձնահատկությունները: Ներկայացված են Հայաստանում կառավարության ֆիսկալ քաղաքականության հիմնական ուղղությունները ու դրանց առանձնահատկությունները հետձգնաժամային ժամանակաշրջանում, ինչպես նաև՝ կոնկրետ առաջարկություններ՝ այդ քաղաքականության արդյունավետությունը մեծացնելու վերաբերյալ:

Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսական զարգացման տարբեր փուլերի ընթացքում մեծ կարևորություն ունի ոչ միայն դրամավարկային քաղաքականության, այլև մակրոտնտեսական մյուս կարևոր գործիքի ֆիսկալ քաղաքականության արդյունավետ իրականացումը: Թե՛ դրամավարկային, թե՛ ֆիսկալ քաղաքականությունը պետության ընդհանուր տնտեսական քաղաքականության կարևոր բաղկացուցիչներն են: Վերջինս պետության կողմից իրականացվող գործառնությունների համալիր է՝ ուղղված տնտեսական գործընթացների կարգավորմանը, կանոնակարգմանը և սահմանված թիրախային ցուցանիշների ապահովմանը:

Թեև ֆիսկալ քաղաքականության տեսական հիմքը բավականաչափ ուսումնասիրված է, սակայն տնտեսագիտության այս ոլորտի գիտական ուսումնասիրությունների ուղղությունները դեռևս իրենց չեն սպառել: Այս ոլորտում

գոյություն ունեն մի շարք կարևոր և դեռևս չլուծված հիմնախնդիրներ, որոնց ազդեցությունը տնտեսության վրա պահանջում է ինչպես դրանց շուտափույթ և արդյունավետ լուծումներ, այնպես էլ ֆիսկալ քաղաքականության տեսական հիմքի հետագա կատարելագործում: Հատկապես կարևորվում է ֆիսկալ քաղաքականության նոր մոտեցումների և ուղղությունների մշակումը վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո՝ դրա բացասական ազդեցությունները հաղթահարելու և հետագա նմանատիպ մարտահրավերներին առավելապես պատրաստ լինելու համար:

Ֆիսկալ քաղաքականությունը պետության կողմից ֆինանսական գործառույթների համալիր է՝ ուղղված պետական ծախսերի և եկամուտների ձևավորմանը: Այն իրենից ներկայացնում է պետական ծախսերի, հարկային քաղաքականության և պետական բյուջեի ցուցանիշների փոփոխման ու կառավարման ոլորտում պետական միջոցառումների համալիր՝ ուղղված տնտեսական աճին, լրիվ զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև վճարային հաշվեկշռի հավասարակշռմանը:

Ֆիսկալ քաղաքականությունը՝ որպես տնտեսության վրա ներազդելու գործուն և ազդեցիկ մեթոդ, առավելապես դրսևորվեց՝ սկսած նախորդ դարի 30-ական թվականներից, և դրա տնտեսագիտական հիմքի զարգացումը մեծապես կապվում է անգլիացի ականավոր տնտեսագետ Ջոն Մեյնարդ Բեյնսի հետ: Բեյնսը և հետագայում նաև նրա գաղափարական կողմնակիցները պետության ֆիսկալ քաղաքականությունը վերագրել են տնտեսության կայունացման ու աճի, լրիվ զբաղվածության ապահովման և գների մակարդակի վրա ներազդելու ամենագլխավոր դերը: Իրենց տնտեսագիտական ուսումնասիրությունների առանցքում քեյնսականները դիտարկում են համախառն պահանջարկը՝ ելնելով այն գաղափարից, որ հենց վերջինիս միջոցով է ձևավորվում համախառն առաջարկը: Ըստ այս տեսության՝ հարկերի դրույքաչափերի նվազեցումը հանգեցնում է համախառն պահանջարկի աճի, ինչն էլ, իր հերթին, ավելացնում է իրական ՀՆԱ ցուցանիշները, բարձրացնում շուկայական գները: Արդյունքում՝ սղաճի տեմպերը նույնպես աճում են, իսկ պետական բյուջեի դրամական մուտքերը կարճաժամկետ հատվածում կրճատվում են, և մեծանում է դրա պակասորդը:

Ի հակադրություն այս տեսակետին՝ «առաջարկի տնտեսության» կողմնակիցները համարում են, որ համախառն առաջարկն է ձևավորվում համախառն պահանջարկը և ըստ նրանց՝ քեյնսյան տեսությունը հաշվի չի առնում համախառն առաջարկի ընդհանուր շարժի վրա հարկերի ազդեցությունը: Այս տնտեսագիտական տեսության կողմնակիցները կարծում են, թե հարկերի նվազեցումը խթանում է համախառն առաջարկը և ավելացնում է պետական բյուջեի հարկային մուտքերը, ինչի հետևանքով կրճատվում է բյուջեի պակասորդը: Մակայն ոչ բոլոր տնտեսագետներն են համաձայնվում այս տեսակետին: Իրականում, ճիշտ է, հարկերի նվազեցումը կարող է հանգեցնել հարկային մուտ-

քերի ավելացման, սակայն դրա համար բավականաչափ երկար ժամանակ է պահանջվում, այնինչ համախառն պահանջարկի վրա ազդեցությունը կրում է ավելի կարճաժամկետ բնույթ և ավելի տեսանելի է: Տնտեսագիտական տեսության մեջ այս երկու՝ իրար հակադիր մոտեցումներն էլ կիրառություն ունեն, և դրանցից որևէ մեկի գերակայությունը՝ գործնական կիրառության առումով, կախված է կոնկրետ երկրի տնտեսական իրավիճակից և պետության որդեգրած տնտեսական քաղաքականությունից:

Ժամանակակից ֆիսկալ քաղաքականության հիմնական թիրախներն են տնտեսական աճը և լրիվ զբաղվածությունը, տարածքային անհամաչափ զարգացման համահարթեցումը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը և այլն: Հարկ է նշել, որ պետության ֆիսկալ քաղաքականությունը բնութագրելու համար անհրաժեշտ է պարզել դրա կոնկրետ նպատակները: Վերջիններից կարելի է առանձնացնել.

- տնտեսական ցիկլային տատանումների կրճատումը,
- ֆինանսատնտեսական ճգնաժամերի հետևանքների հաղթահարումը,
- տնտեսական աճի ապահովումը,
- սղաճի կրճատումը կամ դրա համապատասխան տեմպերի պահպանումը,
- լրիվ զբաղվածության ապահովումը և այլն:

Ֆիսկալ քաղաքականության գերակա նպատակը պետական եկամուտների ձևավորման համար դրամական ռեսուրսների ներգրավումն ու կենտրոնացումն են համապատասխան ֆոնդերում, որոնց միջոցով իրականացվում է պետության տնտեսական, այդ թվում՝ ֆինանսական քաղաքականությունը: Այդպիսի ֆոնդերից, բնականաբար, ամենակարևորը պետական բյուջեն է: Վերջինս իրենից ներկայացնում է պետության ֆինանսական պլանը որոշակի ժամանակահատվածի համար (սովորաբար մեկ տարվա), որը բաղկացած է պետական եկամուտներից և ծախսերից: Ընդ որում, պետական բյուջեում արտացոլվում է դրանց մանրամասն կառուցվածքը:

Արդյունավետ ֆիսկալ քաղաքականության էությունն արտահայտվում է պետական բյուջեի ճշգրիտ պլանավորման մեջ, ինչն ապահովվում է հարկային արդյունավետ համակարգի և բյուջետային միջոցների ծախսային ուղղությունների ճշգրիտ սահմանմամբ:

Պետական ծախսերը և հարկային համակարգը տնտեսության կարգավորման կարևորագույն գործիքներն են: Վերջիններիս միջոցով հնարավոր է կառավարել ՀՆԱ աճը՝ ըստ սահմանված նպատակների և ցուցանիշների, քանի որ պետական ծախսերը և հարկերը անմիջական ազդեցություն են ունենում համախառն եկամտի, համախառն պահանջարկի, արտադրության ծավալային մակարդակի, զբաղվածության վրա: Կարելի է ասել, որ ներկայումս հարկային համակարգը պետական եկամուտների ձևավորման միջոցից վերածվել է համախառն պահանջարկի վրա ներազդելու գործիքի, ինչը, բնականաբար,

պայմանավորված է տնտեսության կառավարման համակարգի զարգացմամբ և տնտեսական առաջընթացով:

Ֆիսկալ քաղաքականության գործիքներով տնտեսության վրա ներազդումը կատարվում է ուղղակի և անուղղակի մեթոդներով: Ուղղակի մեթոդներից հիմնականը բյուջետային կարգավորումն է՝ համապատասխան եկամուտների ապահովման և ծախսերի իրականացման միջոցով: Անուղղակի մեթոդներով պետությունն ազդում է տնտեսվարողների ֆինանսական հնարավորությունների և երկրում համախառն վճարունակ պահանջարկի ձևավորման վրա: Հարկերի դրույքաչափերի փոփոխության, հարկային զանազան արտոնությունների տրամադրման, չհարկվող եկամտի շեմի փոփոխության միջոցով պետությունն ապահովում է համախառն պահանջարկի նախընտրելի մակարդակ, արտադրության կայուն ծավալներ և ամենակարևորը՝ տնտեսական աճի համապատասխան ցուցանիշներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընդունված է տարբերակել ֆիսկալ քաղաքականության դիսկրեցիոն և ոչ դիսկրեցիոն ուղղություններ: Դիսկրեցիոն ֆիսկալ քաղաքականությունը պետության կողմից հարկերի և ծախսերի նպատակաուղղված մանիպուլյացիան է՝ արտադրության և զբաղվածության մակարդակները փոփոխելու, սղաճը վերահսկելու և տնտեսական աճը արագացնելու նպատակով: Այս քաղաքականության մեթոդներից կարելի է նշել հարկերի դրույքաչափերի փոփոխությունները, ինչպես նաև՝ պետական աջակցության ծրագրերի, պետական գնումների և պետական պատվերներով իրականացվող զանազան ծրագրերի ծավալային փոփոխությունները: Սոցիալ-տնտեսական ոչ բարենպաստ իրավիճակներում պետությունը կիրառում է դիսկրեցիոն ֆիսկալ քաղաքականության տարբեր գործիքներ՝ սոցիալական լարվածությունը թուլացնելու, ազգաբնակչության անապահով խավերին նյութական լրացուցիչ աջակցություն ցուցաբերելու, արտադրության հետագա անկումը կանխելու և գործազրկության մակարդակը նվազեցնելու նպատակով: Տնտեսվարողների և ազգաբնակչության եկամուտների կտրուկ նվազումը կանխելու համար կիրառվում են հարկային զանազան արտոնություններ, ինչպես նաև վերանայվում են որոշակի հարկերի դրույքաչափերը:

Դիսկրեցիոն քաղաքականությունն իրականացվում է նաև պետական տրանսֆերտների և գնումների միջոցով: Վերջիններիս փոփոխությունը անմիջականորեն հանգեցնում է համախառն ծախսերի ուղղակի փոփոխության, որն էլ իր հերթին՝ համախառն պահանջարկի աճի: Դիսկրեցիոն ֆիսկալ քաղաքականության բնույթը և դրա այս կամ այն գործիքի կիրառումը հիմնականում կախված են երկրում տիրող տնտեսական իրավիճակից և պետության կողմից տարվող տնտեսական քաղաքականությունից:

Ֆիսկալ դիսկրեցիոն քաղաքականության շրջանակներում առկա են ֆինանսական հետևյալ փոխկապվածությունները.

1. Պետական ծախսերի ավելացումը մեծացնում է համախառն պահանջարկը թե՛ մասնավոր սպառման և թե՛ ներդրումների աճի միջոցով, ինչի արդյունքում՝ աճում են արտադրության ծավալները և զբաղվածությունը,
2. Հարկերի ավելացումը նվազեցնում է տնտեսվարողների ու ազգաբնակչության եկամուտները և արդյունքում կրճատվում է համախառն առաջարկը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է արտադրության կրճատման և գործազրկության մակարդակի աճի:

Տնտեսական անկման, մասնավորապես ֆինանսատնտեսական ճգնաժամերի արդյունքում պետությունը վարում է խթանող ընդլայնողական ֆիսկալ քաղաքականություն, ինչը դիսկրեցիոն ֆիսկալ քաղաքականության ոլորտում արտահայտվում է պետական ծախսերի զգալի ավելացման և հարկերի դրույքաչափերի կրճատման որոշակի համադրությունով: Հիմնականում այսօրինակ քաղաքականությունը ենթադրում է պետական բյուջեի զգալի պակասորդ, սակայն մյուս կողմից՝ այն թույլ է տալիս կանխել արտադրության զգալի անկումը: Պետական ծախսերի ավելացման հետևանքով տեղի է ունենում, այսպես կոչված, «դուրամդման էֆեկտ»՝ պետության և մասնավոր ներդրումների մրցակցության արդյունքում, ինչպես նաև՝ արտադրության գործոնների վերաբաշխում՝ հօգուտ պետության: Պետության կողմից ծախսերի աճը, ի վերջո, բերում է շուկայական տոկոսադրույթների աճի, որն էլ, իր հերթին, նպաստում է մասնավոր ներդրումների կրճատմանը: Վերջիններիս նվազումը նպաստում է կապիտալի արտահոսքին և բացասաբար է անդրադառնում երկրում տնտեսական աճի ու ազգաբնակչության կենսամակարդակի վրա: Այս քաղաքականության արդյունավետությունը կախված է պետական ծախսերի օպտիմալ ծավալի սահմանումից: Ընդհակառակը, տնտեսական վերելքի շրջանում հավելյալ պահանջարկը զսպելուն և գների կայունությունը պահպանելուն միտված պետական ֆիսկալ դիսկրեցիոն քաղաքականությունը տարվում է պետական ծախսերի կրճատման և հարկերի ավելացման միջոցով: Այսպիսի քաղաքականության կիրառման ժամանակ սովորաբար պետական բյուջեն հավելուրդային է. հավաքագրվող եկամուտները գերազանցում են նախատեսված ծախսերը:

Ոչ դիսկրեցիոն ֆիսկալ քաղաքականությունը ենթադրում է պետական բյուջեի հարկային զուտ մուտքերի փոփոխություն՝ որպես հետևանք ազգային արտադրության ծավալների փոփոխության: Հիմնականում, պետական ծախսերը և հարկերը փոփոխվում են ինքնաբերաբար: Սա, որպես կանոն, արդյունք է հարկերի պրոգրեսիվ դրույքաչափերի և պետական տրանսֆերտային համակարգի: Ոչ դիսկրեցիոն ֆիսկալ քաղաքականությունը գործում է անկախ՝ շնորհիվ ներքին շուկայական կարգավորիչների: Վերջիններս պետության քաղաքականությունից անկախ գործող շուկայական մեխանիզմներ են, որոնց միջոցով զգալիորեն համահարթվում են տնտեսության անկումները և վերելքները: Ներքին կարգավորիչների առանձնահատկությունն այն է, որ հարկերի դրույքաչափերը փոխկապակցված են եկամուտների մակարդակի հետ, օրինակ,

եկամտահարկը, շահութահարկը և այլն: Հարկային մուտքերի փոփոխությունը՝ կախված եկամուտների մակարդակի փոփոխությունից, ներքին կարգավորիչների դրսևորման հետևանք է: ՀՆԱ բարձր աճի տեմպեր գրանցած ժամանակահատվածում հարկային մուտքերը մեծանում են՝ պայմանով, որ հարկային համակարգը պրոգրեսիվ է: Որպես հետևանք՝ սահմանափակվում է ազգաբնակչության գնողունակությունը, ինչն էլ, իր հերթին, զսպում է տնտեսական աճը: Իսկ տնտեսական անկման շրջանում տեղի է ունենում ճիշտ հակառակ գործընթացը: Ինչպես տեսնում ենք, ներքին կարգավորիչները տնտեսական կայունության ապահովման կարևոր գործիքներ են: Դրանք, պետության ֆիսկալ քաղաքականության կարևոր բաղադրիչներ լինելով, մեղմացնում են արտադրության ծավալների և զբաղվածության անցանկալի տատանումները, սակայն չեն վերացնում արտադրության ծավալային փոփոխության անբարենպաստ այլ հետևանքները: Ներքին կարգավորիչները հիմնականում ազդում են արտադրության ծավալների, գների մակարդակի և շուկայական տոկոսադրույքի վրա: Համախառն պահանջարկի կրճատման դեպքում ներքին կարգավորիչները կանխում են արտադրության ծավալների կտրուկ փոփոխությունները: Դրանց ազդեցությունը արտացոլվում է բյուջեների ցիկլային հավելուրդի կամ պակասորդի վրա:

Ֆիսկալ դիսկրեցիոն և ոչ դիսկրեցիոն քաղաքականությունները կիրառվում են՝ հաշվի առնելով պետության կողմից վարվող տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները, ինչպես նաև՝ տնտեսության կարգավորման ուղղակի կամ անուղղակի ֆինանսական գործիքների և մեթոդների կիրառման հնարավորությունները: Պետության ֆիսկալ քաղաքականության արդյունավետությունը մեծապես կախված է դրա ճիշտ ժամանակին լինելուց և տնտեսական իրավիճակներին ժամանակին արձագանքելու կարողությունից: Զուտ քաղաքական նպատակներով դրա կիրառումը, ինչպես նաև արտաքին տնտեսական միջավայրում տեղի ունեցող ճգնաժամային իրավիճակները նվազեցնում են երկրում պետության ֆիսկալ քաղաքականության արդյունավետությունը: Այդ իսկ պատճառով ֆիսկալ քաղաքականության այս կամ այն ուղղությունը գործի դնելուց առաջ մեծապես կարևորվում է արտաքին և ներքին տնտեսական իրավիճակների, ինչպես նաև այդ քաղաքականությունների առանձնահատկությունները՝ հաշվի առնելով երկրի տնտեսության վրա դրանց հնարավոր ազդեցությունների ճշգրիտ գնահատումը:

Ֆիսկալ քաղաքականությունն, ինչպես նշվեց, իրականացվում է իր գործիքակազմի միջոցով: Վերջինս ներառում է այն տնտեսական մեխանիզմները, որոնք ապահովում են ֆիսկալ քաղաքականության սահմանած նպատակների իրագործումը: Ֆիսկալ քաղաքականության գործիքների շարքին են դասվում պետական սուբսիդիաները և տրանսֆերտները, պետական գնումները, հարկերի և դրանց դրույքաչափերի փոփոխությունները, նոր հարկերի սահմանումը: Նշված գործիքներից յուրաքանչյուրը յուրովի է ազդում տնտեսության վրա:

Օրինակ, տարբեր հարկերի դրույքաչափերի փոփոխությունները տարբեր կերպ են ազդում թե՛ տնտեսական ցուցանիշների և թե՛ այն խթանների վրա, որոնց միջոցով ապահովվում է տնտեսական աճը: Պետական ծախսերի տարբեր ձևերի կիրառումը նույնպես տարբեր կերպ է ազդում տնտեսության վրա, քանի որ ծախսերի բազմարկիչի էֆեկտը տարբեր կերպ է ի հայտ գալիս: Օրինակ, բնական է, որ երկրի պաշտպանության համար ծախսերի ավելացումը այլ կերպ կազդի տնտեսության վրա, իսկ պետական տրանսֆերտների ավելացումը՝ մեկ այլ կերպ: Կախված տնտեսական ցիկլի համապատասխան փուլից, որում գտնվում է երկրի տնտեսությունը տվյալ ժամանակահատվածում, և պետության տնտեսական քաղաքականության առանձնահատկություններից՝ ֆիսկալ քաղաքականության գործիքները տարբեր կիրառություն են գտնում: Մասնավորապես տնտեսական անկման շրջանում որպես խթանող և ընդլայնողական ֆիսկալ քաղաքականության գործիքներ կարող են հանդես գալ.

-հարկերի նվազեցումը, ինչպես նաև որոշ հարկատեսակների վերացումը,

-տրանսֆերտների ավելացումը,

-պետական գնումների ծավալների ավելացումը:

Զսպողական ֆիսկալ քաղաքականության գործիքներից կարելի է առանձնացնել.

-պետական գնումների ծավալների կրճատումը,

-հարկերի դրույքաչափերի ավելացումը, ինչպես նաև նոր հարկերի սահմանումը,

-պետական տրանսֆերտների կրճատումը:

Իհարկե, գոյություն ունեն նաև ոչ շատ հաճախ կիրառվող այլ ֆիսկալ գործիքներ, մասնավորապես հասարակական աշխատանքները, որոնք պետությունը կազմակերպում է ժամանակավորապես գործազուրկ անձանց ներգրավելու միջոցով՝ զբաղվածության համապատասխան մակարդակ ապահովելու համար, գյուղատնտեսական սուբսիդիաները, որոնք տրամադրվում են գյուղատնտեսության ոլորտում համապատասխան եկամուտների մակարդակ ապահովելու համար և այլն:

Այժմ անդրադառնանք ՀՀ-ում մինչճգնաժամային և հետճգնաժամային ֆիսկալ քաղաքականության առանձնահատկությունների վերլուծությանը: Հարկ է նշել, որ ՀՀ-ում իրականացվող ֆիսկալ քաղաքականությունը մինչ ֆինանսատնտեսական ճգնաժամը՝ 2004 թվականից հետո, եղել է զսպողական: Այս քաղաքականության շնորհիվ զգալիորեն զսպվեց համախառն առաջարկը, ինչպես նաև կրճատվեց պետական բյուջեի պակասորդը, ինչը ճիշտ ուղղություն էր տնտեսական վերելքի տվյալ ժամանակահատվածում: Արդյունքում՝ հնարավորություն ընձեռվեց նաև կրճատել պարտք /ՀՆԱ ցուցանիշը: Այսպես, եթե 2000թվականին արտաքին պետական պարտքը ՀՆԱ-ի շուրջ 45 տոկոսն էր կազմում, ապա հետագա տարիներին այդ ցուցանիշն ունեցել է կայուն նվազման միտում և 2008 թվականի վերջին հասել է 13.2 տոկոսի: Սա մեծապես

նպաստեց հետագայում նոր ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու հնարավորությանը՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները հաղթահարելու նպատակով: Նշենք նաև, որ ֆիսկալ զսպողական քաղաքականությունն ուղեկցվել է նաև մեղմ զսպողական դրամավարկային քաղաքականությամբ: Սակայն տեղին է նշել, որ չնայած զսպողական տնտեսական քաղաքականության կիրառմանը, տնտեսության մեջ, այնուամենայնիվ, մինչև 2008թ. որոշակի գերտաքացում նկատվել է: Փաստացի պետական ֆիսկալ քաղաքականությունը այդ ընթացքում թեև եղել է զսպողական, սակայն ոչ բավարար չափով: Սա արդյունք էր հիմնականում հարկահավաքման մակարդակի ոչ բարձր լինելու, տնտեսության որոշ հատվածներում մրցակցության բացակայության, ձևավորված կոշտ գների, ինչպես նաև տնտեսության կառուցվածքային բարեփոխումների իրականացման ոլորտում որոշակի բացթողումների: Նշված հանգամանքները էապես նվազեցնում են ճգնաժամային իրավիճակներին դիմակայելու տնտեսության ճկունությունը և ֆիսկալ քաղաքականության բազմարկիչ բնույթի ազդեցությունը: Արդյունքում՝ տնտեսական վերելքի փուլում տնտեսությունը ավելի շուտ է հայտնվում գերտաքացման մեջ, իսկ ճգնաժամերի ժամանակ ավելի խորն է լինում տնտեսական անկման մակարդակը:

ՀՀ տնտեսության վրա ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցություններն սկսեցին պարզորոշ դրսևորվել 2008 թվականի հոկտեմբեր ամսից: Հայաստանում ճգնաժամի ազդեցության առանձնահատկությունն այն էր, որ դրա առաջնային ազդեցությունը, այն է՝ ֆինանսական շուկաների խուճապ և բանկերի ու ֆինանսական այլ կազմակերպությունների իրացվելիության խնդիր չդրսևորվեցին: Սա մեծապես պայմանավորված էր նրանով, որ Հայաստանում այդքան զարգացած չէ ֆինանսական շուկայի ֆոնդային հատվածը, բացատրվում է նաև այն հանգամանքով, որ ֆինանսական կառույցների վերահսկողության բավական խիստ քաղաքականություն էր կիրառվում ՀՀ ԿԲ կողմից:

Սակայն Հայաստանում նկատվեց ֆինանսատնտեսական ճգնաժամի երկրորդային ազդեցությունը, որը տնտեսության վրա ներազդեց հետևյալ 4 ուղղություններով՝

- արտերկրից ստացվող մասնավոր տրանսֆերտների զգալի կրճատում,
- համաշխարհային շուկաներում հումքի և հատկապես մետաղների գների նվազում,
- արտահանվող ապրանքների և ծառայությունների արտահանման պահանջարկի անկում՝ համաշխարհային տնտեսության մեջ դրսևորված համախառն պահանջարկի անկման հետևանքով,
- ՀՀ տնտեսություն ներհոսող ներդրումների ծավալների անկում՝ համաշխարհային տնտեսությունում ֆինանսական ակտիվների իրացվելիության խնդիրների հետևանքով:

Վերոնշյալ պայմաններում տնտեսական աճը 2008 թվականի վերջին նախորդ տարիների երկնիշ ցուցանիշներից նվազեց՝ կազմելով ընդամենը 6.8



տոկոս: Իսկ արդեն 2009 թվականից՝ հայաստանյան տնտեսության մեջ սկսեցին ավելի վառ դրսևորվել ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2009 թվականի հունվար-ապրիլ ամիսներին 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, գրանցվեց 9.7 տոկոս տնտեսական անկում:

Ճգնաժամի բացասական հետևանքները հաղթահարելու և հետագա ավելի խորը անկումից խուսափելու համար թե՛ ֆիսկալ և թե՛ դրամավարկային քաղաքականությունները պետք է լինեն ընդլայնողական, այսինքն՝ մասնավոր հատվածի ծախսերի կրճատման դեպքում պետական հատվածը պետք է լինի ծախսողական, որպեսզի ապահովի պահանջարկի անհրաժեշտ մակարդակ և հակազդի ֆինանսական ներհոսքի կրճատման ազդեցությանը: Ճգնաժամի համաշխարհային համընդհանուր բնույթի պատճառով մեծապես կարևորվում էր, որ բոլոր երկրներում միաժամանակ իրականացվեին խթանող մակրոտնտեսական քաղաքականություն, այդ թվում՝ ֆիսկալ: Միայն մեկ կամ մի քանի երկրի խթանող քաղաքականությունն ուղեկցվելու էր այդ երկրների ներմուծման աճով՝ դանդաղեցնելով և շատ դեպքերում ձախողելով տնտեսական ակտիվության վերականգնման գործընթացը: Հարկ է նշել, որ գրեթե բոլոր զարգացած խոշոր երկրներն էլ որդեգրեցին մակրոտնտեսական ընդլայնողական քաղաքականություն, ինչը, կարծում ենք, կնպաստի ճգնաժամի բացասական հետևանքների արագ հաղթահարմանը:

Առանձին երկրների տնտեսությունների ներսում նույնպես անհրաժեշտություն էր առաջացել համակարգել ֆիսկալ և դրամավարկային քաղաքականությունները: Մասնավորապես, միայն դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառմամբ բանկային տոկոսադրույքների նվազեցումը դեռևս բավարար չէր համախառն պահանջարկի զգալի չափով խթանման համար, քանի որ տնտեսության մեջ ռիսկերի ավելացման պարագայում բանկային համակարգի կողմից վարկավորման համար խիստ զգուշավոր կեցվածքը խոչընդոտում էր տոկոսադրույքի տրանսմիսիոն մեխանիզմների ազդեցության արդյունավետությանը: Այս իրավիճակում առավել քան կարևորվում էր պահանջարկի ուղղակի խթանմանն ուղղված քաղաքականությունը, որի արդյունավետ տարբերակն ընդլայնողական ֆիսկալ քաղաքականությունն էր: Այս դեպքում էլ պետական պարտատոմսերի ծավալների ընդլայնման միջոցով պետական պարտքի մեծացումը կարող էր հանգեցնել երկարաժամկետ տոկոսադրույքների անցանկալի աճի: Նման պայմաններում առաջ է գալիս համակարգված դրամավարկային և ֆիսկալ քաղաքականության իրականացման անհրաժեշտություն: Մասնավորապես, բացի տոկոսադրույքների իջեցումից, կենտրոնական բանկերից պահանջվում էր իրականացնել պետական պարտատոմսերի ուղղակի առքի մեծածավալ գործառնություններ՝ կանխարգելելու երկարաժամկետ տոկոսադրույքների աճը: Բնականաբար, ընդլայնողական մակրոտնտեսական քաղաքականության իրագործման համար խիստ կարևորվում էր նաև

միջազգային կառույցների և դոնոր երկրների ֆինանսական օժանդակությունը: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները մեղմելու համար ՀՀ կառավարությունը որդեգրեց մակրոտնտեսական քաղաքականության հետևյալ սկզբունքները.

- հասարակության և գործարար միջավայրի հետ հաղորդակցման և շփումների ակտիվացում՝ ճիշտ ազդակներ հաղորդելու և տնտեսության մեջ միասնական օբյեկտիվ սպասումներ ձևավորելու համար,
- տնտեսության իրական հատվածին օժանդակող ընդլայնողական ֆիսկալ և դրամավարկային քաղաքականության իրականացում:

Տնտեսության անկման պայմաններում կարևորվում է հակացիկլիկ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության իրականացումը: Ընդ որում, հակացիկլիկ քաղաքականության արդյունավետ իրականացման կարևոր նախապայման են մակրոտնտեսական և ֆինանսական կայունությունը, ինչպես նաև տնտեսության մեջ վերը ներկայացված խեղաթյուրումների բացառումը:

Տնտեսական քաղաքականության վերոնշյալ սկզբունքների հիման վրա կառավարության ընդլայնողական տնտեսական քաղաքականությունն ընթացել է հետևյալ ուղղություններով.

- ենթակառուցվածքային նախագծերի իրականացում, ինչն անմիջապես նպաստելու էր ներքին պահանջարկին, հետևաբար և տնտեսական աճին ու նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- հասցեական օժանդակություն ժամանակավոր ֆինանսական դժվարություններ ունեցող ձեռնարկություններին,
- գործարար միջավայրի բարելավման և գործունեության համար անհրաժեշտ օժանդակություն փոքր ու միջին բիզնեսին՝ վերացնելով առկա խոչընդոտները,
- սոցիալական ուղղվածություն ունեցող բյուջեի ծախսերի հետևողական իրականացում՝ թուլացնելու սոցիալական ճնշումները և հասարակության հոռետեսական սպասումները:

Վերը նշված ռազմավարական խնդիրների արդյունավետ իրականացման համար, կարծում ենք, ներկա փուլում ՀՀ կառավարության կողմից տարվող ֆիսկալ քաղաքականության ոլորտում մեծապես կարևորվում են հետևյալ մարտավարական միջոցառումների ընդգրկումը և իրականացումը.

1. ԱԱՀ դրույքաչափի նվազեցում՝ մինչև 15 տոկոս, ինչը կնպաստի թե՛ ՀՀ-ում գների մակարդակի նվազեցմանը, թե՛ գործարար ակտիվության մեծացմանը և թե՛ համախառն պահանջարկի խթանմանը:
2. Շահութահարկի տարբերակված պրոգրեսիվ դրույքաչափերի սահմանում, իսկ փոքր և միջին ձեռնարկությունների համար շահութահարկի դրույքաչափի նվազեցում մինչև 15 տոկոս:
3. Եկամտահարկից անձնական նվազեցվող գումարի չափի մեծացում՝ մինչև

50000 ՀՀ դրամ, այլ կերպ ասած՝ եկամտահարկի գծով չհարկվող շեմի բարձրացում:

4. Եկամտահարկի դրույքաչափերի վերանայում: Մասնավորապես, ցածր և միջին եկամուտների մասով (մինչև 200,000 ՀՀ դրամ) դրույքաչափի նվազեցում մինչև 7 տոկոսի մակարդակ, որը մեծապես կնպաստի ազգաբնակչության հիմնական զանգվածի կողմից սպառման ծավալների աճին: Փոխարենը, բարձր եկամուտներ վաստակող (1000.000 ՀՀ դրամ և ավելի) անձանց համար պրոգրեսիվ բարձր դրույքաչափերի սահմանում:
5. Հաստատագրված վճարներով հարկվող տնտեսվարողների ցանկի վերանայում:
6. Տնտեսության իրական հատվածում գործող ընկերություններին ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու գործում աջակցելու նպատակով պետական երաշխիքային հիմնադրամների ստեղծում:
7. Նոր ստեղծվող ընկերություններին հարկային արտոնյալ ժամկետի տրամադրում, իսկ փոքր կամ ընտանեկան բիզնես ստեղծելու դեպքում՝ նաև առաջին երկու տարում ընդհանրապես հարկերից ազատում:
8. Գործազրկության նպաստի չափի ավելացում:
9. Գործազուրկ անձանց համար պետության կողմից հասարակական աշխատանքների կազմակերպում և դրանց դիմաց վճարում՝ միջին աշխատավարձի չափով:
10. Գործազուրկ անձանց վերամասնագիտացման նպատակով լայնամասշտաբ կրթական ծրագրերի մեկնարկի կազմակերպում և օժանդակում:
11. Անշարժ գույքի շուկայի ակտիվացման նպատակով հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների համաֆինանսավորում: Նմանատիպ միջոցառումներ արդեն իսկ մեկնարկել են, մասնավորապես երիտասարդ ընտանիքների և գիտնականների համար, սակայն այդ վարկերի տոկոսադրույքները դեռևս բավական բարձր են, օգտվելու պայմանները՝ սահմանափակ՝ ուստի և լայնորեն հասանելի չեն բոլոր ցանկացողներին: Նպատակահարմար կլինի, որ այդպիսի ծրագրեր իրականացվեն բնակչության այլ խավերի համար և վերանայվեն այդպիսի աջակցությամբ վարկերի թե՛ տոկոսադրույքները և թե՛ պայմանները:
12. Նախկինում ձևավորված հարկային ժամկետանց պարտավորությունների լրիվ ներում՝ պայմանով, որ ընկերությունները կշարունակեն իրենց գործունեությունը և նոր լրացուցիչ աշխատատեղեր կստեղծեն:
13. Նոր՝ հավելյալ աշխատատեղեր ստեղծող ընկերություններին հարկային արտոնությունների տրամադրում:
14. Արտահանման ուղղվածություն ունեցող ձեռնարկություններին ֆինանսական աջակցության և հարկային արտոնությունների տրամադրում:
15. Ազատ տնտեսական գոտիների ստեղծում՝ հիմնականում ՀՀ հեռավոր շրջաններում տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդիրները

լուծելու, այդ տարածքների արտադրական և սոցիալական ենթակառուցվածքները զարգացնելու, ինչպես նաև աշխատուժի արտագաղթը կանխելու նպատակով:

16. Հարկային վարչարարության առավել պարզեցում և թափանցիկության ապահովում:

Կարծում ենք, թե վերը նշված միջոցառումների իրականացումն էլ ավելի արդյունավետ ու հասցեական կդարձնի ՀՀ կառավարության կողմից իրականացվող ֆիսկալ քաղաքականությունը և կապահովի կայուն տնտեսական աճ՝ Հայաստանի տնտեսության համար առաջիկա ժամանակահատվածում:

*В.Л. Арутюнян, К.С. Саргсян*

***Финансово-экономический кризис и фискальная политика государства***

В данной статье рассматриваются главные формы, инструменты и главные особенности фискальной политики государства. Представлены главные направления фискальной политики в Армении и их особенности в пост-кризисном периоде. Также представлены конкретные рекомендации для повышения эффективности фискальной политики Армении.

*V.L. Harutunyan, K.S. Sargsyan*

***The Financial-Economic Crisis and the State Fiscal Policy***

The present article aims to give a detailed analysis of the main types of state fiscal policy, tools used for the policy implementation and the peculiarities of their application. The main directions of the RA Government policy and their peculiarities in post-crisis period are also presented. There are also worked out several recommendations with the view to enhancing the effectiveness of the measures taken by the Government.

**Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն**

1. Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառները և դրա ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Հանրապետական գիտաժողովի նյութեր, Գիրք 1, Երևան 2012թ. (համահեղինակ՝ Վ.Հարությունյան):
2. Ֆինանսատնտեսական ճգնաժամը և պետության կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունը, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Հանրապետական գիտաժողովի նյութեր, Գիրք 1, Երևան 2012թ.:
3. Համաշխարհային տնտեսության մեջ առկա ցիկլերը, դրանց տեսակները և առաջացման պատճառները, Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա ամսագիր N 4(142), ապրիլ 2012թ. (համահեղինակ՝ Խ.Սաֆարյան):

**Տեղեկություններ հեղինակների մասին.**

***Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի*** - ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր: E-mail: info@economics.sci.am

***Սարգսյան Կարեն Սամվելի*** - ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.: E-mail: [kssargsyan@yahoo.com](mailto:kssargsyan@yahoo.com)

Տրվել է խմբագրություն 04.06.2012